# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ՋՐԱՀՈՎԻՏԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## ՈՐՈՇՈՒՄ

No 22-Ն «12» 12 2014թ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների և « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 -րդ կետի պահանջները ավագանին.

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

2015թ. թվականի համար Ջրահովիտ համայնքում սահմանել տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատրության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար

ա/ Մինչև 300 ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների ինչպես նաև մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7 500 դրամ

բ/ Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բ.ա./ 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15 000 դրամ

բ.բ./ 501-ից մինչև 1000 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 20 000 դրամ

բ.գ./ 1001-3000ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25 000 դրամ

բ.դ./3001ք/մ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35 000դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

գ/ Մինչև 20 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1 500 դրամ:

դ/ 20 և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2 500 դրամ

2 .Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերի ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1500 դրամ:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2 500 դրամ:

4Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ ոգելից և ալկահոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ.

բ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

5.Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 1ք/մ տարածքի համար 350 դրամ:

բ/ Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման դեպքում տեղականը տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել 3000 դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին, ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

ա/ առևտրի օբեկտների համար 25 000 դրամ:

7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ այլ արտաքին գովազդի համար 1 000 դրամ:

բ/ դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ:

8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

9.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

10.Համայնքի տարածքում

ա/ Համայնքի տարածքում շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկոտնտեսական պայմանները մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 5000 դրամ:

բ/ Աճուրդ-մրցույթի մասնակցության վարձավճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2 000 դրամ:

11. ա/Համայնքի յուրաքանչյուր բնակչից աղբահանության վճարը յուրաքանչյուր ամսվա համար սահմանել 50 դրամ:

բ/Համայնքում գործող յուրաքանչյուր առևտրի օբյեկտից աղբահանության վճարը յուրաքանչյուր ամսվա համար սահմանել 400 դրամ:

12.Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառվել է 0,5 գործակիցը:

Ավագանու անդամներ՝

Ա. Գասպարյան Կողմ

Հ.Ղազարյան Կողմ

Ռ. Բաբայան Կողմ

ԳՅՈՒՂԱՊԵՏ

Հ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՋՐԱՀՈՎԻՏԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

No 21-Ն

«12» 12 2014թ.

## ՋՐԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-ին կետի պահանջները ավագանին.

## ՈՐՈՇՈՒՄ Է`

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ջրահովիտ համայնքի սեփականության 2014 թվականի գույքագրման փաստաթղթերը համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ`

Ա. Գասպարյան կողմ

Հ.Ղազարյան կողմ

Ռ. Բաբայան կողմ

ԳՅՈՒՂԱՊԵՏ Հ.Ղազարյան

ՀավելվածN1
Ավագանու 12.12.2014թ. թիվ 21Ն որոշման

# ԱԿՏ
## Գույքագրման վերաբերյալ

08. 12.2014թ

գ.Ջրաhովիտ                                                                                 Գյուղապետ                    Հ. Ղազարյան

Մենք ներքո ստորագրողներս՝ մասնակցությամբ Ջրաhովիտ համայնքի գյուղապետարանի կողմից նշանակված գույքագրման հանձնաժողովի նախագահ՝ աշխատակազմի քարտուղար Է. Ավետիսյանի , անդամներ՝ գլխ. հաշվապահ Կ. Ողբերյանի, առաջատար մասնագետ Հ. Ստեփանանի , Հաշվետար գանձապահ Մ.Կարապետյանի կազմեցինք սույն ակտը ս/թ դեկտեմբերի 8-ին, համաձայն որոշում թիվ47 03.12.2010թ. Ջրաhովիտի գյուղապետարանում կատարված ապրանքանյութական տարեվերջյան գույքագրման արդյունքների վերաբերյալ:

Պարզվեց, որ գյուղապետարանում առկա են հետևալ հիմնական և շրջանառու միջոցները:

| Հ/Հ | ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՔԱՆԱԿԸ /հատ/ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ | Արժեքը դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| | Հիմնական միջոցներ | | | |
| 1 | Գյուղապետարանի շենք | 1 | 1963թ | 740,738 |
| 2 | Գյուղապետարանի շենք | 1 | 1987թ | 452,366 |
| 3 | Պահեստ | 1 | 1963թ | 207,330 |
| 4 | Ջրի գիծ | 5,6կմ | 2012թ. 25տարով տրամադրված է ՀՋԿ-ին անհատույց օգտագործման | 1,850,000 |
| 5 | Մեքենայի մեծ կշեռք | 1 | անսարք Օտարվել 12.11.2014թ. | 14,262 |
| 6 | Մ/Մանկապարտեզի շենք | 1 | 1960թ | 762,771 |
| 7 | Տպիչ Canon MF-4010 | 1 | նորմալ | 114,000 |
| 8 | UPS 600 | 1 | Անսարք | 36,000 |
| 9 | Համակարգիչ P IV 2660 | 1 | նորմալ / 2006թ | 143,217 |
| 10 | Մոնիտոր CTX TFT 17" | 1 | նորմալ / 2006թ | 106,250 |
| 11 | Տպիչ Canon LBP-2900 | 1 | նորմալ / 2006թ | 58,438 |
| 12 | Scanner Mustek 2400 TA | 1 | նորմալ / 2006թ | 35,417 |
| 13 | Ուժային տրանսֆորմատոր ՏՄ 250 | 1 | Անսարք/2007թ/1992թ.օտարվել է 12.11.2014թ. | 700,000 |
| 14 | Ավտոմեքենա Վազ 2106 | 1 | Անսարք / 2007թ/ 1983թ.օտարվել է 12.11.2014թ. | 1,400,000 |
| 15 | թիվ31 հորատանցք | 75մ | 2006թ | 3,552,200 |
| 16 | Գազի միջին ճնշման գիծ | 720 /գծմ/ | 2007թ | 9,000,000 |
| 17 | Համակարգիչ P IV 1.8mhz core 2due | 1 | 2007թ | 125,000 |
| 18 | Մոնիտոր Samsung 793 DF | 1 | 2007թ | 40,000 |
| 19 | Գազի ցածր ճնշման գիծ | 3725 /գծմ/ | 2008թ | 29,703,600 |
| 20 | Համակարգիչ CPU E2200 | 1 | 2009թ/մարզպետարան/ | 185,000 |
| 21 | Թվային ֆոտոխցիկ /OLYMPUS FE 360/ | 1 | 2009թ | 120,000 |
| 22 | Մոնիտոր Samsung 743NX | 1 | 2009թ/մարզպետարան/ | 95,000 |
| 23 | Տպիչ Canon 3010 | 1 | 2009թ/մարզպետարան/ | 60,000 |
| 24 | Աղբամաններ | 18 | 2009թ | 1,215,594 |
| 25 | Փողոցային լուս. էլ. սյուներ /լուսարձակներով/ | 15 | 2010թ | 500,000 |
| 26 | Բեմի վարագույր | 1 | 2009թ | 250,000 |
| 27 | Համակարգչային սեղան զզրոցով | 4 | 2010թ | 180,000 |
| 28 | Պոմպ իր հարակից սարքավորումներով /Մ/մանկապարտեզի տարածքում/ | 1 | Անսարք/ 2007թ. | 400,000 |
| 29 | Աթոռ պտտվող մեծ | 1 | 2010թ | 45,000 |
| 30 | Գրապահարան փակ | 1 | 2010թ | 70,000 |
| 31 | Բազմոց փափուկ | 1 | 2010թ | 85,000 |
| 32 | Կապուղի /ինտերնետի/ | 1 | 2010թ | 35,000 |
| 33 | Համակարգիչ CPU E5400/Monitor Samsung 2031/ | 1 | 2011թ | 220,000 |
| 34 | Տպիչ XEROX 3100 | 1 | 2011թ | 110,000 |
| 35 | UPS Invader 650w | 2 | 2011թ | 70,000 |
| 36 | Սառնարան Toshiba 32SZ | 1 | 2011թ | 160,000 |
| 37 | Հեռուստացույց Toshiba 24" | 1 | 2011թ | 140,000 |
| 38 | Փողոցային լուս. էլ. սյուներ /լուսարձակներով/ | 19 | 2011թ | 3,500,000 |
| 39 | Համակարգիչ Core i3 | 1 | 2013 | 189,000 |
| 40 | Մոնիտոր Samsung 19" | 1 | 2013 | 47,000 |
| 41 | Տպիչ Canon MF-4410 | 1 | 2013 | 90,000 |
| 42 | Խոսափող MAX DH 744 | 1 | 2013 | 40,000 |
| 43 | Բարձրախոս MAX J1815USB | 1 | 2013 | 170,000 |
| 44 | Բարձրախոս MAX J1121 | 1 | 2013 | 70,000 |
| | Ընդամենը Հիմնական միջոցներ | | | 53,123,921 |

| | Շրջանառու միջոցներ | ՔԱՆԱԿԸ /հատ/ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ | Արժեքը դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Մեծ սեղան | 3 | նորմալ | 24 |
| 2 | Գրքի պահարան | 1 | նորմալ | 4,169 |
| 3 | Երկաթյա պահարան | 6 | նորմալ | 11,851 |
| 4 | Գրասեղան | 7 | նորմալ | 4,936 |
| 5 | Էլ. տաքացուցիչ | 2 | նորմալ | 50,000 |
| 6 | Աթոռներ թատերական | 20 | նորմալ | 2,144 |
| 7 | Գրքի պահարան | 3 | նորմալ | 924 |
| 8 | Երկաթյա պոլկա | 9 | նորմալ | 793 |
| 9 | Կատալոգի արկղ /երկաթյա/ | 1 | նորմալ | 200 |
| 10 | Կատալոգի արկղ /փայտյա/ | 1 | նորմալ | 192 |
| 11 | Էտաժերկա | 1 | նորմալ | 138 |
| 12 | Ցուցափեղկ | 1 | նորմալ | 177 |
| 13 | Դաշնամուր | 1 | նորմալ | 3,567 |
| 14 | UPS Powercom BNT-600A | 1 | նորմալ | 15,230 |
| 15 | Ֆլեշ քարտ/Kingston USB 256Mb | 1 | նորմալ | 7,084 |
| 16 | Keyboard Chicony 780A Black | 1 | նորմալ | 3,000 |
| 17 | Mouse Netscroll PS/2 optical | 1 | նորմալ | 3,500 |
| 18 | Տպիչ սարք գունավոր HP | 1 | 2007թ | 15,000 |
| 19 | Ֆլեշ քարտ/ USB 2 Gb | 2 | նորմալ | 20,000 |
| 20 | TV tuner | 1 | 2009թ/մարզպետարան/ | 20,000 |
| 21 | UPS 600WA | 1 | Անսարք/2009թ | 25,000 |
| 22 | UPS 600W | 1 | 2009թ/մարզպետարան/ | 25,000 |
| 23 | Վարագույրի կախիչներ | 18,18գծմ | 2009թ | 20,000 |
| 24 | Ցայտաղբյուր | 2 | 2006թ | 50,000 |
| 25 | Աթոռ կիսափափուկ | 10 | 2010թ | 120,000 |
| 26 | Աթոռ պտտվող փոքր | 5 | 2010թ | 90,000 |
| 27 | Շորի կախիչ | 1 | 2010թ | 10,000 |
| 28 | UPS INTEX 725W | 1 | 2013թ. | 18,000 |
| 29 | Սվիչ SF 1008D | 1 | 2013թ. | 6,000 |
| 30 | Խոսափողի հենակ MAX BMS 100 | 1 | 2013թ. | 8,000 |
| 31 | Բարձրախոսի հենակ | 1 | 2013թ. | 12,000 |
| | Ընդամենը Շրջանառու միջոցներ | | | 546,929 |

Հանձնաժողովի նախագահ՝ Է.Ավետիսյան

Անդամներ Կ.Ռուբենյան

Հ.Ստեփանյան

Մ.Կարապետյան